«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ»
փակ բաժնետիրական ընկերություն

Ֆինանսական հաշվետվություններ

2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեության նկարագրություն 5
2. Գործարար միջավայր 5
3. Պատրաստման հիմունքներ 5
4. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր 6
5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ 14
6. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ 16
7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 17
8. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 17
9. Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ 18
10. Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ 18
11. Հարկում 19
12. Այլ ակտիվներ 20
13. Այլ պարտավորություններ 20
14. Սեփական կապիտալ 21
15. Միջնորդավճարների գծով եկամուտ 21
16. Անձնակազմի գծով ծախսեր 21
17. Վարչական և այլ ծախսեր 21
18. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ 22
19. Գործարքներ կապակցված կողմերի հետ 22
20. Ֆինանսական գործիքների իրական արժեք 24
21. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն 25
22. Ռիսկերի կառավարում 26
23. Կապիտալի համարժեքություն 28
24. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն 28

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲ Ընկերության
Բաժնետերերին և Տնօրենների Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք)), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և Տնօրենների Խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Տնօրենների Խորհուրդը պատասխանատու է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Տնօրենների Խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող կարևոր թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն
Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝ Էրիկ Հայրապետյան

Պատասխանատու աուդիտոր՝ Ելենա Ադամյան

28 ապրիլի, 2023թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2022թ. դեկտեմբերի 31	2021թ. դեկտեմբերի 31
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	24,649	282,054
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	8	1,624,416	872,939
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ	9	1,321,606	1,430,007
Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	10	135,141	35,506
Հետաձգված հարկային ակտիվ	11	9,086	7,042
Այլ ակտիվներ	12	301,408	245,761
Ընդամենը ակտիվներ		**3,416,306**	**2,873,309**
Պարտավորություններ			
Ընթացիկ հարկային պարտավորություն		296,100	221,910
Այլ պարտավորություններ	13	340,157	162,008
		636,257	**383,918**
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	14	800,000	800,000
Պահուստային կապիտալ		130,308	72,326
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	9	349,038	457,439
Չբաշխված շահույթ		1,500,703	1,159,626
Ընդամենը սեփական կապիտալ		**2,780,049**	**2,489,391**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**3,416,306**	**2,873,309**

Ստորագրված և լիազորված է թողարկման Ընկերության գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից 2023թ. ապրիլի 28-ին:

Ժան Մազեջյան
Գործադիր տնօրեն

Միսակ Իսաջանյան
Գլխավոր հաշվապահ

Կից ներկայացված 1-ից 24 ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:
:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2022թ.*	*2021թ.*
Միջնորդավճարների գծով եկամուտ	15	2,906,850	2,378,922
Տոկոսային և նմանատիպ եկամուտ		92,664	56,040
Ֆինանսական խորհրդատվությունից եկամուտ		20,246	13,023
Այլ եկամուտներ		1,707	1,515
Զուտ վնաս արտարժույթով գործառնություններից		(12,990)	(800)
Ֆինանսական ծախսեր		(16,068)	(2,533)
Անձնակազմի գծով ծախսեր	16	(187,793)	(126,119)
Վարչական և այլ ծախսեր	17	(950,410)	(891,704)
Շահույթ մինչև հարկումը		**1,854,206**	**1,428,344**
Շահութահարկի գծով ծախս	11	(353,503)	(268,718)
Տարվա շահույթ		**1,500,703**	**1,159,626**
Այլ համապարփակ եկամուտ			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող հոդվածներ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումների գծով չիրացված օգուտ		(108,401)	42,216
Տարվա այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո		**(108,401)**	**42,216**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		**1,392,302**	**1,201,842**

Կից ներկայացված 1-ից 24 ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:
:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Կանոնադրա-կան կապիտալ	*Ներդրումային արժեթղթերի վերագնա-հատման պահուստ*	*Պահուստային կապիտալ*	*Չբաշխված շահույթ*	*Ընդամենը սեփական կապիտալ*
Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**800,000**	**415,223**	**34,514**	**756,238**	**2,005,975**
Տարվա շահույթ	–	–	–	1,159,626	**1,159,626**
Հատկացումներ պահուստային կապիտալին	–	–	37,812	(37,812)	**–**
Այլ համապարփակ եկամուտ	–	42,216	–	–	**42,216**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	**–**	**42,216**	**37,812**	**1,121,814**	**1,201,842**
Բաժնետերերին վճարված շահաբաժիններ	–	–	–	(718,426)	**(718,426)**
Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**800,000**	**457,439**	**72,326**	**1,159,626**	**2,489,391**
Տարվա շահույթ	–	–	–	1,500,703	**1,500,703**
Հատկացումներ պահուստային կապիտալին	–	–	57,982	(57,982)	**–**
Այլ համապարփակ եկամուտ	–	(108,401)	–	–	**(108,401)**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	**–**	**(108,401)**	**57,982**	**1,442,721**	**1,392,302**
Բաժնետերերին վճարված շահաբաժիններ	–	–	–	(1,101,644)	**(1,101,644)**
Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**800,000**	**349,038**	**130,308**	**1,500,703**	**2,780,049**

Կից ներկայացված 1-ից 24 ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:
:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2022թ.*	*2021թ.*
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Շահույթ մինչև հարկումը		1,854,206	1,428,344
Ճշգրտումներ			
Մաշվածություն	17	35,544	34,934
Ակնկալվող վարկային կորուստների պահուստ	17	3,512	1,922
Ստացվելիք տոկոսներ		(13,712)	(19,351)
Վճարվելիք տոկոսներ	17	16,068	2,533
Արտարժույթի փոխանակման տարբերություններից զուտ (օգուտ)/վնաս		8,099	(5,092)
Հիմնական միջոցների օտարում		1,217	-
Դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		**1,904,934**	**1,443,290**
Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/նվազում			
Այլ ակտիվներ		(56,034)	(63,875)
Գործառնական պարտավորությունների զուտ ավելացում/ (նվազում)			
Այլ պարտավորություններ		74,432	1,519
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը		**1,923,332**	**1,380,934**
Վճարված շահութահարկ		(281,357)	(165,876)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից		**1,641,975**	**1,215,058**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Բանկերում տեղաբաշխված ավանդներ		(1,515,837)	(750,000)
Բանկերում տեղաբաշխված ավանդների մարում		774,353	500,000
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(4,192)	(9,516)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում		**(745,676)**	**(259,516)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Բաժնետերերին վճարված շահաբաժիններ	15	(1,101,644)	(718,426)
Վարձակալության գծով պարտավորության հիմնական մասի մարում	24	(21,936)	(26,788)
Վարձակալության գծով պարտավորության տոկոսի վճարում	24	(16,068)	(2,533)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ֆինանսավորման գործունեությունում		**(1,139,648)**	**(747,747)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**(243,349)**	**207,795**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում		282,054	76,471
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	7	242	(188)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(14,298)	(2,024)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում	7	**24,649**	**282,054**
Լրացուցիչ տեղեկատվություն			
Ստացված տոկոսներ		63,391	26,809

Կից ներկայացված 1-ից 24 ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:
:

1. Հիմնական գործունեության նկարագրություն

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնվել է 2013 թվականին և կարգավորվում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենսդրությամբ: Ընկերությունը գրանցվել է 2013 թվականի նոյեմբերի 19-ին՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից թիվ 2 արտոնագրային համարով:

Ընկերության հիմնական գործունեությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի կառավարումն է: *«Կուտակային կենսաթոշակների մասին»* ՀՀ օրենքի համաձայն սահմանված պարտադիր կուտակային վճարներ կատարելու պարտավորությանը վերաբերող դրույթները ուժի մեջ են մտել 2014 թվականի հունվարի 1-ից, հետևաբար Ընկերության հիմնական գործունեությունը մեկնարկել է 2014 թվականի հունվարի 1-ից: Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի շրջանակում Ընկերության կառավարման ներքո գտնվում են հետևյալ երեք տեսակների ֆոնդերը.

- «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ,
- «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ պահպանողական կենսաթոշակային ֆոնդ,
- «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ:

Ընկերության գրասենյակը գտնվում է Երևանում: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10 շենք, թիվ 100-101 տարածք:

2. Գործարար միջավայր

Հիմնադրամն իր հիմնական գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, այն ենթակա է Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաների ազդեցությանը, որոնք հանդիսանում են զարգացող շուկաներ: Իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, որոնք այլ իրավական և հարկաբյուջետային խոչընդոտների հետ միասին նպաստում են Հայաստանում գործող կազմակերպությունների առջև ծառացած մարտահրավերներին:

Հայաստանի բիզնես միջավայրի վրա ազդեցություն է ունեցել նաև Ուկրաինայի հետ պատերազմը, որը սկսվել է 2022թ: Ուկրաինայի հետ պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի կորուստ:

Իրավիճակը դեռ չի հանգուցալուծվել, սակայն այն արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների ինչպես Ուկրաինայում, այնպես էլ Ռուսաստանում և ամբողջ աշխարհում: Ռուսաստանը Հայաստանի առանցքային առևտրային գործընկերներն է: Ակնկալվում է, որ պատերազմը էական ազդեցություն կունենա նաև Հայաստանի տնտեսության վրա: Քանի որ պատերազմը դեռ շարունակվում է, անհնար է արժանահավատորեն գնահատել իրավիճակի ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա՝ հաշվի առնելով առկա անորոշությունը ընդհանուր տնտեսության վրա ազդեցության մեծության գնահատման տեսանկյունից: Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ ձեռնարկում է համապատասխան միջոցներ ներկայիս իրավիճակում իր գործունեության կայունությունն ապահովելու համար:

3. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից, և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի (ՖՀՄՄԿ) կողմից:

Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

Ճշգրտումներ

2022թ.-ի ներկայացմանը համապատասխանեցնելու նպատակով 2021թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կատարվել են հետևյալ վերադասակարգումները.

	Նախկինում ներկայացված	*Ճշգրտում*	*Ճշգրտված*
Վարչական և այլ ծախսեր	(894,237)	2,533	(891,704)
Ֆինանսական ծախսեր	(2,533)	2,533	-

Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով:

Ֆոնդերի կառավարում

Ընկերությունը ներդրողների անունից կառավարում է ներդրումային ֆոնդերում պահվող ակտիվները: Այս կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառված չեն Ընկերության այս ֆինանսական հաշվետվություններում, քանի որ Ընկերությունը հանդես է գալիս որպես ներդրողների գործակալ ֆոնդերում:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից, և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամտի ճանաչումը.

Տոկոսային եկամուտ և ծախս

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող գործիքների, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Ֆոնդերի կառավարման վճարներ

Ֆոնդերի կառավարումից ստացվող հասույթը ճանաչվում է որպես վաստակած, հիմք ընդունելով հասույթի այն գումարը, որն Ընկերությունն իրավասու է ստանալ ժամանակաշրջանի համար: Ֆոնդերի կառավարման վճարները հաշվարկվում են կառավարվող ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ կիրառվող վճարների պայմանագրային դրույթների հիման վրա:

Միջնորդավճարների գծով եկամուտ

Վճարները, միջնորդավճարները և այլ եկամուտներն ու ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են ՀՀ առևտրային բանկերում հաշիվների մնացորդներից և կարճաժամկետ ժամկետային ավանդներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակահատվածում:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Վարձակալություններ

i. Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը կիրառել է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Ընկերությունը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք ներկայացնում են հիմքում ընկած ակտիվները օգտագործելու իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կդառնա վարձակալի կողմից օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և ճշգրտված վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Բացառությամբ, եթե Ընկերությունը խելամտորեն համոզված է ձեռք բերել վարձակալված ակտիվը սեփականության իրավունքով, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ենթակա են արժեզրկման գնահատման:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Ընկերությունը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումները (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսումը, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարները, որոնք սպասվում է, որ կվճարվեն վարձակալի կողմից մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գին, երբ Ընկերությունը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Ընկերության՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Փոփոխուն վարձավճարներ, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը:

Վարձավճարների ներկա արժեքը հաշվելիս Ընկերությունը օգտագործում է սկզբնական կիրառման ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ըստ էության հաստատուն վարձավճարների փոփոխություն կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն:

Կարճաժամկետ վարձակալություններ

Ընկերությունը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և չեն պարունակում գնման օպցիոն): Կարճաժամկետ վարձակալությունների գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Արտարժույթի վերահաշվարկ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
ՀՀ դրամ / 1 Եվրո	420.06	542.61
ՀՀ դրամ / 1 Դոլար	393.57	480.14

Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող երեք օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն: Հետաձգված շահութահարկը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում, երբ առաջացման պահին դրանք չեն ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում գործում են նաև գործառնական տարբեր հարկեր, որոնք համապատասխանում են Ընկերության գործունեությանը: Այդ հարկերը ներառված են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ ծախսեր հոդվածում:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Իրական արժեքի չափում

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ ընթացիկ շուկայական պայմաններում, հիմնական, կամ դրա բացակայության դեպքում՝ ամենաբարենպաստ շուկայում կստացվեր շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Իրական արժեքով չափումը ենթադրում է, որ ակտիվի վաճառքը կամ պարտավորության փոխանցումը կատարվում է՝

- Այդ ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում, կամ
- Հիմնական շուկայի բացակայության դեպքում՝ տվյալ ակտիվի կամ պարտավորության համար ամենաբարենպաստ շուկայում:

Ընկերությունը պետք է հասանելիություն ունենա հիմնական կամ ամենաբարենպաստ շուկա: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափվում է՝ կիրառելով այնպիսի ենթադրություններ, որոնք շուկայի այլ մասնակիցները կօգտագործեին ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը որոշելիս՝ ենթադրելով, որ շուկայի մասնակիցները գործում են իրենց լավագույն տնտեսական շահերից ելնելով: Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում շուկայի մասնակցի՝ տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը՝ ակտիվի առավել արդյունավետ և լավագույն օգտագործումից կամ այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավել արդյունավետ և լավագույն կերպով:

Ընկերությունը օգտագործում է գնահատման մեթոդներ, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, և որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնին հասցնելով համապատասխան դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը և նվազագույնին հասցնելով ոչ դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը: Բոլոր ակտիվներն ու պարտավորությունները, որոնց իրական արժեքը չափվում կամ բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններում, դասակարգվում են ըստ ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիայի՝ ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից՝

- 1-ին մակարդակ – համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ – գնահատման մոդելներ, որոնցում բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- 3-րդ մակարդակ – գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող ամենացածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն:

Այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնք պարբերաբար ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում, Ընկերությունը դիտարկում է հիերարխիայի մակարդակների փոփոխության անհրաժեշտությունը՝ նորից վերլուծելով դրանց դասակարգումը (ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Սկզբնական ճանաչում

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները ճանաչվում են գործարքի ամսաթվով: Կանոնավոր են համարվում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում:

Սկզբնական չափում

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին կախված է պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով և գործարքի ծախսերը նվազեցվում կամ ավելացվում են տվյալ գումարին, բացառությամբ՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման տեսակներ

Ընկերությունն իր բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգում է՝ ելնելով ակտիվների կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից, չափումն իրականացնելով.

- Ամորտիզացված արժեքով,
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով,
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

Ընկերությունն իր ներդրումային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով: Ընկերությունը կարող է հաշվառել ֆինասական գործիքները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Ֆինանսական պարտավորությունները, բացի վարկային պարտավորվածություններից և ֆինանսական երաշխիքների պայմանագրերից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, երբ դրանք պահվում են վաճառքի համար, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով հաշվառում:

Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Ընկերությունը չափում է ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլ ֆինանսական գործիքները ամորտիզացված արժեքով միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ստորև.

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունն իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույն կերպով արտացոլում է գործունեության նպատակների իրագործման համար ֆինանսական ակտիվների խմբերի կառավարման ուղղությամբ որդեգրած մեթոդները:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամիտ ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն» կամ «սթրեսային» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերը տեղի են ունենում Ընկերության սկզբնական ակնկալիքներից տարբեր կերպով, Ընկերությունը չի փոխում տվյալ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հետագայի համար հաշվի է առնում այդ տեղեկատվությունը նոր առաջացող կամ նոր ձեռք բերվող ֆինանսական ակտիվները գնահատելիս:

Միայն մայր գումարի և տոկոսի վճարման (SPPI) գնահատումներ

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են SPPI գնահատման պահանջներին:

Այս գնահատման նպատակով, մայր գումար հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման ժամանակ և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե կան մայր գումարի մարումներ կամ վարձատրության/զեղչի ամորտիզացիա):

Վարկային պարտավորվածության մեջ սովորաբար տոկոսի ամենակարևոր տարրերն են՝ փողի ժամանակային արժեքը և վարկային ռիսկը: SPPI գնահատումը իրականացնելու համար Ընկերությունը կիրառում է դատողություն և հաշվի է առնում համապատասխան գործոններ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվի արժույթը և տոկոսադրույքի գործողության ժամանակահատվածը:

Համեմատության համար, այն պայմանագրային դրույթները, որոնք առաջացնում են ավելի քան նվազագույն ենթարկվածություն ռիկսերին կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի տատանողականության, որոնք կապված չեն բազային վարկային պայմանագրի հետ, չեն առաջացնում միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա տոկոսի վճարում հանդիսացող պայմանագրային դրամական միջոցների հոսքեր: Այս դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ և պարտավորությունների վերադասակարգում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները, չհաշված բացառիկ դեպքերը, երբ Ընկերությունը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

Արժեզրկման գնահատում համաձայն ՖՀՄՍ 9-ի

Ընկերությունը ԱՎԿ-ն հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու ակնկալվող դրամական միջոցների պակասորդները, զեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ: Դրամական միջոցների պակասորդը կազմակերպությանը պայմանագրով վճարման ենթակա դրամական միջոցների հոսքերի և կազմակերպության ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունն է: ԱՎԿ հաշվարկի մեխանիզմները ներկայացված են ստորև, և դրանց հիմնական տարրերը հետևյալն են՝

PD — Դեֆոլտի հավանականությունը որոշակի ժամանակային հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատումն է: Դեֆոլտը միայն կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակահատվածում որոշակի պահի, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

EAD — Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դա ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ, բաց թողնված վճարումների վրա հաշվեգրված տոկոսները և այլն:

LGD — Դեֆոլտի դեպքում կորստի չափը դա դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրով սահմանված դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Այն սովորաբար արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս:

ԱՎԿ պահուստը հիմնվում է վարկային վնասների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային վնաս կամ ԱԿԿ), եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, որի դեպքում պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային վնասի վրա (12ամԱՎԿ):

Ընկերությունը գործընկերների նկատմամբ կիրառում է արտաքին միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից տրամադրված վարկանիշներ:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետ՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում դեֆոլտ տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը:

Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Ընկերությունը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

Փուլ 1: — Սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:

Փուլ 2: — Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Ընկերությունը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:

Փուլ 3: — Ակտիվը համարվում է արժեզրկված: Ընկերությունը ձևակերպում է ԱՎԿ պահուստ:

POCI — Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

Դեֆոլտի սահմանումը

Ընկերությունը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով առկա է դեֆոլտ, և հետևաբար այն դասում է որպես Փուլ 3-ին պատկանող ֆինանսական գործիք (այսինքն՝ վարկային տեսանկյունից արժեզրկված) ԱՎԿ հաշվարկի նպատակով, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուն 90 օրով ուշացնում է պայմանագրային վճարումների կատարումը:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ և պարտավորությունների ապաճանաչումը (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ, կիրառելի դեպքերում, ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ

- Ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է,
- Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրով, ինչպես նաև,
- Ընկերությունը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ լրանում է դրա գործողության ժամկետը:

Եթե նույն վարկատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն փոփոխված են նախորդի համեմատ, նման փոխարինումը կամ փոփոխությունը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը արտացոլվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: 2022 թվականի ընթացքում օգտակար ծառայության ժամկետները փոխվել են: Մաշվածության հետևյալ դրույքաչափերն են կիրառվել ընթացիկ ժամանակահատվածում.

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	
	2022թ.	***2021թ.***
Համակարգիչներ	3.0	5.0
Տրանսպորտային միջոցներ	5.0	5.0
Կապիտալ ներդրումներ վարձակալված հիմնական միջոցներում	Վարձակալության պայմանագրի գործողության ժամկետով*	Օգտակար ծառայությունից և վարձակալության ժամկետից նվազագույնը
Այլ հիմնական միջոցներ	5.0	5.0

* *ցանկացած հիմքով անշարժ գույքի վարձակալության պայմանագրի վաղաժամկետ լուծման կամ դադարեցման դեպքում վերանորոգման հաշվեկշռային արժեքը ճանաչվում է ծախս պայմանագրի լուծման/դադարման ամսաթիվն ընդգրկող հարկային տարվա ընթացքում:*

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ դրանք բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերն ու լիցենզիաները: Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով: Ձեռնարկատիրական միավորման արդյունքում ձեռքբերված ոչ նյութական ակտիվների արժեքը ձեռքբերման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքն է: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված վնասները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով օգտակար ծառայության ընթացքում, որը կազմում է 7-ից 10 տարի, և գնահատվում են արժեզրկման տեսանկյունից, երբ առկա են ոչ նյութական ակտիվի արժեզրկման հայտանիշեր: Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկման մեթոդները և ժամկետները վերանայվում են, նվազագույնը՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես էմիսիոն եկամուտ:

Շահաբաժիններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն և նվազեցվում են սեփական կապիտալից միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են համապարփակ ֆինանսական հաշվետվություններում:

Գլխավոր պահուստ

Գլխավոր պահուստը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Ընկերության կանոնադրությանը համապատասխան, որի համաձայն Ընկերության գլխավոր պահուստը պետք է կազմի Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 15 տոկոսը: Եթե պահուստի նշված գումարը չի ապահովվում, ապա տարվա շահույթի առնվազն 5 տոկոսը պետք է հատկացվի պահուստին: Գլխավոր պահուստը պետք է օգտագործվի միայն Ընկերության վնասները ծածկելու, Ընկերության պարտատոմսերը մարելու և Ընկերության բաժնետոմսերը հետգնելու համար, եթե շահույթը և այլ պահուստները բավարար չեն այդ նպատակների համար:

Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ

Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստը Ընկերության՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումների հաշվետու տարվա վերջի դրությամբ իրական արժեքի և բսկզբնական ճանաչման ժամանակ դրանց իրական արժեքի տարբերությունն է:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները հաշվանցվում են պարտավորություններով և համապարփակ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են զուտ մնացորդով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք և գոյություն ունի դրանք զուտ հիմքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների կամ համանման գործարքների խմբից առաջացող օգուտների և վնասների համար, օրինակ՝ Ընկերության առևտրային գործունեությունից:

Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերությունը ճանաչում է կապակցված կողմերի գործարքները, որոնց համար համապատասխան ստանդարտները չեն պահանջում սկզբնական ճանաչում իրական արժեքով, գործարքի պայմանագրերում նշված փաստացի գներով:

5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Ընկերությունն առաջին անգամ կիրառել է ստանդարտների որոշակի փոփոխություններ, որոնք գործում են 2022թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերությունը վաղաժամկետ չի կիրառել որևէ թողարկված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ, մեկնաբանություններ կամ փոփոխություններ:

Անբարենպաստ պայմանագրեր – Պայմանագրի կատարման ծախսեր – Փոփոխություններ ՀՀՄՍ 37-ում

Անբարենպաստ պայմանագիրը այն պայմանագիրն է, ըստ որի պայմանագրով ստանձնած անխուսափելի պարտավորությունների ծախսերը այսինքն՝ ծախսերը, որոնցից Ընկերությունը չի կարող խուսափել, քանի որ ստանձնել է պայմանագիրը, գերազանցում են դրա շրջանակներում ակնկալվող տնտեսական օգուտները:

Փոփոխությունները հստակեցնում են, որ պայմանագիրը անբարենպաստ կամ վնասաբեր ճանաչելու դեպքում Ընկերությունը պարտավոր է ներառել ապրանքների կամ ծառայությունների մատակարարման պայմանագրի հետ ուղղակիորեն առնչվող ծախսերը, ներառյալ լրացուցիչ ծախսերը (օրինակ՝ ուղղակի աշխատուժի և նյութերի ծախսերը), այնպես էլ պայմանագրային գործունեության հետ անմիջականորեն կապված ծախսերի բաշխումը (օրինակ՝ պայմանագրի կատարման համար օգտագործվող սարքավորումների մաշվածությունը և պայմանագրի կառավարման և վերահսկման ծախսերը): Ընդհանուր և վարչական ծախսերը ուղղակիորեն կապված չեն պայմանագրի հետ և չեն ներառվում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ուղղակիորեն գանձվում են պայմանագրային գործընկերոջից: Նշված փոփոխությունները ազդեցություն չեն ունեցել ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հիմնական միջոցներ՝ հասույթ մինչև նախատեսված օգտագործումը – Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում, Վարձակալություն

Փոփոխությունը կազմակերպություններին արգելում է հիմնական միջոցների արժեքից հանել արտադրված ապրանքների վաճառքից ստացված ցանկացած եկամուտ, եթե նշված ապրանքը արտադրվել է ակտիվը կառավարության կողմից նախատեսված գտնվելու վայր և կարգավիճակին հասցնելու ընթացքում: Փոխարենը, կազմակերպությունը ճանաչում է այդպիսի ապրանքների վաճառքից ստացված հասույթը և ծախսումները՝ շահույթում կամ վնասում:

Անցումային դրույթների համաձայն, ընկերությունը կիրառում է փոփոխությունները միայն Հիմնական միջոցների այն տարրերի նկատմամբ, որոնք հասանելի են դարձել կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման սկսվող կամ դրան հաջորդող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար (սկզբնական կիրառման ամսաթիվը): Նշված փոփոխությունները էական ազդեցություն չեն ունեցել ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ հիմնական միջոցների շնորհիվ արտադրված ապրանքների վաճառքներ տեղի չեն ունեցել, կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման սկսվող կամ դրան հաջորդող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում:

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ – Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար «10 տոկոս» թեստում ներառվող վճարներ

Փոփոխությունները պարզաբանում են այն վճարները, որոնք կազմակերպությունը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները ըստ էության տարբեր են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն նրանց, որոնք վճարվում կամ ստացվում են փոխառուի և փոխատուի միջև, ներառյալ երրորդ կողմի անունից փոխառուի կամ փոխատուի կողմից վճարված կամ ստացված վճարները: «Ֆինանսական գործիքներ՝ ճանաչում և չափում» ՀՀՄՍ 39-ի համար նման փոփոխություն չի առաջարկվում:

Ընկերությունը կիրառում է փոփոխությունները այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք ձևափոխված կամ փոխանակված են կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման սկսվող կամ դրան հաջորդող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Փոփոխությունները չունեն էական ազդեցություն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հրապարակված, բայց ուժի մեջ չմտած ստանդարտներ

Ստորև ներկայացված են ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք թողարկվել են, բայց Ընկերության ֆինանսական հաշվետվությունների հրապարակման օրվա դրությամբ դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը մտադիր է կիրառել այդ ստանդարտները ուժի մեջ մտնելուց հետո:

5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ (շարունակություն)

Հրապարակված, բայց ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

ՀՀՄՍ 1 փոփոխություն. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ և ոչ ընթացիկ

2020 թվականի հունվարին ՀՀՄՍ Խորհուրդը փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 1-ի 69-ից 76-րդ պարագրաֆներում՝ հստակեցնելու պարտավորությունները որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու պահանջները: Փոփոխությունները պարզաբանում են.

- Ինչ է նշանակում մարումը հետաձգելու իրավունք,
- Որ հետաձգելու իրավունքը պետք է գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի վերջում,
- Որ դասակարգման վրա չի ազդում կազմակերպության՝ հետաձգելու իրավունքը օգտագործելու հավանականությունը,
- Որ միայն այն դեպքում, երբ փոխարկելի պարտավորության մեջ ներդրված ածանցյալ գործիքն ինքնին հանդիսանում է բաժնային գործիք, ապա պարտավորության պայմանները չեն ազդի դրա դասակարգման վրա:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվեն հետընթաց: Ընկերությունը ներկայումս գնահատում է ընթացիկ գործունեության վրա փոփոխությունների հնարավոր ազդեցությունը:

Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում – Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարտում

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 8-ում, որտեղ ներկայացված է «հաշվապահական հաշվառման գնահատումների» սահմանումը: Փոփոխությունները պարզաբանում են հաշվապահական հաշվառման գնահատումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և սխալների ուղղման տարբերությունը: Ինչպես նաև, դրանք պարզաբանում են, թե ինչպես են կազմակերպությունները օգտագործում չափման հիմունքները և ելակետային տվյալները՝ հաշվապահական հաշվառման գնահատումներ մշակելու համար: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառվում են հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում այդ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, եթե այդ փաստը բացահայտվում է: Ակնկալվում է, որ փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում

2021թ.-ի փետրվարին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում («Էականության մասին դատողությունների կիրառում»), որտեղ ներկայացված են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները ՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «էական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ թույլատրելով վաղաժամկետ կիրառումը: Քանի որ Գործնական Ցուցումներ 2-ի փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության էականության սահմանման կիրառման ոչ պարտադիր ուղեցույց, այս փոփոխությունների համար ուժի մեջ մտնելու ամսաթվի սահմանման անհրաժեշտություն չկա:

Ընկերությունը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունը Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտումների վրա:

5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ (շարունակություն)

Հրապարակված, բայց ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

Հետաձգված հարկ՝ կապված մեկ գործառնությունից բխող ակտիվների և պարտավորությունների հետ - Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում

2021 թվականի մայիսին խորհուրդը հրապարակեց ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները որոնք նեղացնում են ՀՀՄՍ 12-ի շրջանակներում նախնական ճանաչման բացառությունների ցանկը, այնպես որ այն այլևս չի տարածվում այն գործարքների վրա, որոնք հանգեցնում են հավասար հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների: Փոփոխությունները պետք է կիրառվեն այն գործարքների նկատմամբ, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ հաշվետու ժամանակաշրջանի համար կամ այդ ամսաթվից հետո: Ի լրումն, ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում հետաձգված հարկային ակտիվ (պայմանով, որ առկա է բավարար հարկվող շահույթ) և հետաձգված հարկային պարտավորություն պետք է ճանաչվեն նաև վարձակալության և շահագործումից դուրս գրվող պարտավորությունների հետ կապված բոլոր նվազեցվող և հարկվող ժամանակավոր տարբերությունների համար:

Ընկերությունը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունը

6. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Սույն ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է իրական արժեքի գնահատման մոդելներ: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում, որքան հնարավոր է, հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կստացվեր շուկայական գործարքների դեպքում (տես՝ Ծանոթագրություն 20):

Գործարքներ կապակցված կողմերի հետ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա: Կապակցված կողմերի հետ գործարքները ներկայացված են Ծանոթագրություն 19-ում:

Վարձակալություններ. լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի գնահատում

Ընկերությունը չի կարող հեշտությամբ որոշել վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, հետևաբար վարձակալության գծով պարտավորությունը չափելիս կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը այն տոկոսադրույքն է, որը վարձակալը ստիպված կլիներ վճարել համանման ժամկետով և համանման ապահովմամբ այն փոխառու միջոցների դիմաց, որոնք անհրաժեշտ են համանման տնտեսական միջավայրում համանման արժեք ունեցող օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ձեռքբերման համար: Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը արտացոլում է այն գումարը, որը Ընկերությունը «պետք է վճարի», ինչը պահանջում է գնահատումների կիրառում, երբ չկան դիտարկելի տոկոսադրույքներ (ինչպիսիք են այն դուստր կազմակերպությունները, որոնք ֆինանսավորման գործառնություններ չեն իրականացնում), կամ երբ անհրաժեշտ է կատարել ճշգրտումներ՝ վարձակալության ժամկետները և պայմանները արտացոլելու համար:

6. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ (շարունակություն)

Վարձակալություններ. լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի գնահատում (շարունակություն)

Ընկերությունը գնահատում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ օգտագործելով դիտարկելի ելակետային տվյալներ (ինչպիսիք են օրինակ՝ շուկայական տոկոսադրույքները), եթե հասանելի են և պետք է կատարեն որոշակի կազմակերպությանը բնորոշ գնահատումներ (ինչպիսիք են օրինակ՝ դուստր կազմակերպության վարկանիշը): Մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 5-ում:

Նորացման ընտրանքներով պայմանագրերի վարձակալության ժամկետը որոշելու հարցում նշանակալի դատողություն

Ընկերությունը վարձակալության ժամկետը որոշում է որպես վարձակալության չեղարկվող ժամկետ, ինչպես նաև վարձակալության ժամկետը երկարացնելու տարբերակով ծածկված ցանկացած ժամանակաշրջան, եթե դա հիմնավորված է իրականացնելու համար, կամ վարձակալության դադարեցման տարբերակով ծածկված ցանկացած ժամանակաշրջան, եթե հիմնավորված է, որ չի կիրառվի:

7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	***2022թ.***	***2021թ.***
Հաշիվներ բանկերում	24,673	282,320
Հանած՝ արժեզրկման գծով պահուստ	(24)	(266)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**24,649**	**282,054**

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները պահվում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ B1 (2021թ.: B1) վարկանիշ ունեցող ֆինանսական կազմակերպություններում և բաշխված են Փուլ 1-ում: ԱՎԿ պահուստի փոփոխությունների վերլուծությունը 2022 և 2021 թվականների համար ներկայացված է ստորև.:

	Հազար ՀՀ դրամ
ԱՎԿ պահուստը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**266**
ԱՎԿ փոփոխություն	(242)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**24**
ԱՎԿ պահուստը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**78**
ԱՎԿ փոփոխություն	188
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**266**

8. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	***2022թ.***	***2021թ.***
Ավանդներ բանկերում	1,632,908	877,712
Հանած՝ արժեզրկման գծով պահուստ	(8,492)	(4,773)
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**1,624,416**	**872,939**

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահվում են B1 (2021թ.: B1) վարկանիշ ունեցող ֆինանսական կազմակերպություններում:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների բոլոր մնացորդները բաշխված են Փուլ 1-ում: ԱՎԿ պահուստի փոփոխությունների վերլուծությունը 2022 և 2021 թվականների համար ներկայացված է ստորև.

	Հազար ՀՀ դրամ
ԱՎԿ պահուստը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**4,776**
ԱՎԿ փոփոխություն	3,716
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**8,492**
ԱՎԿ պահուստը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**3,085**
ԱՎԿ փոփոխություն	1,688
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**4,773**

9. Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ

Հազար ՀՀ դրամ	*2022թ.*	*2021թ.*
Ներդրումներ կենսաթոշակային ֆոնդերում		
ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ պահպանողական	1,222,023	1,323,579
ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ հավասարակշռված	51,523	56,616
ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ կայուն եկամտային	48,060	49,812
Ընդամենը ներդրումներ	**1,321,606**	**1,430,007**

Կենսաթոշակային ֆոնդերից յուրաքանչյուրը հիմնադրվել և իր առևտրային գործունեությունն է ծավալում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանոններով: Ֆոնդերում ներդրումներն իրականացվում են հիմնականում երկարաժամկետ տեսլականից ելնելով և չեն ենթադրում էական մարժաներ: Ֆոնդերը ցուցակված չեն ակտիվ շուկաներում:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆոնդերի համախառն զուտ ակտիվների արժեքը կազմում է 292,056,986 հազար ՀՀ դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 248,407,500 հազար ՀՀ դրամ):

ՀՀ համապատասխան օրենսդրության համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է կատարել առնվազն 1% ներդրում յուրաքանչյուր ֆոնդում՝ որպես կառավարիչ, բացառությամբ այն դեպքերի երբ կառավարչի մասնակցությունը գերազանցում է 1,000,000 հազար ՀՀ դրամը: Այդ ներդրումները չեն կարող հետ վերադարձվել մինչև դրանց մարումը և լուծարումը: Ընկերության առավելագույն կորուստները ֆոնդերի հետ կապված արտահայտվում են ֆոնդային միավորներում կատարված ներդրումներով և ֆոնդերից պահանջների ընդհանուր գումարով:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը կուտակել է այդ ներդրումների գծով չիրացված շահույթի պահուստ 349,038 հազար ՀՀ դրամի չափով (2021թ.: 457,439 հազար ՀՀ դրամ).

10. Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	*Վարձակալ-ած գույքի բարելավում*	*Համակար-գիչներ*	*Փոխադրա-միջոցներ*	*Գրասենյակ ային սարքավորում և այլ հիմնական միջոցներ*	*Ոչ նյութական ակտիվներ (Անավարտ պայմանագ-րեր)*	*Օգտագործմ ան իրավունքի ձևով ակտիվներ*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք							
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**27,734**	**1,004**	**19,000**	**24,993**	**–**	**70,685**	**143,416**
Ավելացումներ	–	–	–	171	9,346	2,572	**12,089**
Օտարումներ/դուրս-գրումներ	–	(773)	–	(379)	–	–	**(1,152)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**27,734**	**231**	**19,000**	**24,785**	**9,346**	**73,257**	**154,353**
Ավելացումներ	–	657	–	2,872	663	132,204	**136,396**
Օտարումներ/դուրս-գրումներ	(27,734)	–	–	(2,533)	–	–	**(30,267)**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**–**	**888**	**19,000**	**25,124**	**10,009**	**205,461**	**260,482**
Կուտակված մաշվածություն							
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**20,267**	**664**	**819**	**22,785**	**–**	**40,530**	**85,065**
Մաշվածության գծով ծախս	5,620	195	2,373	1,068	–	25,678	**34,934**
Օտարումներ/դուրս-գրումներ	–	(773)	–	(379)	–	–	**(1,152)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**25,887**	**86**	**3,192**	**23,474**	**–**	**66,208**	**118,847**
Մաշվածության գծով ծախս	630	109	2,793	714	822	30,476	**35,544**
Օտարումներ/դուրս-գրումներ	(26,517)	–	–	(2,533)	–	–	**(29,050)**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**–**	**195**	**5,985**	**21,655**	**822**	**96,684**	**125,341**
Հաշվեկշռային արժեք							
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,847**	**145**	**15,808**	**1,311**	**9,346**	**7,049**	**35,506**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**–**	**693**	**13,015**	**3,469**	**9,187**	**108,777**	**135,141**

11. Հարկում

Հազար ՀՀ դրամ	***2022թ.***	***2021թ.***
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	(355,546)	(269,785)
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում	2,044	1,067
Շահութահարկի գծով ծախս	**(353,503)**	**(268,718)**

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2021թ.: 18%). ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունները մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում են ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով հաշվեկշռային արժեքների միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է՝ կիրառելով 18% հիմնական դրույքաչափը:

Հաշվապահական շահույթի և հարկային փոխհատուցման միջև թվաբանական համաձայնեցումը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	***2022թ.***	***2021թ.***
Շահույթ նախքան հարկումը	**1,854,206**	**1,428,344**
Շահութահարկ 18% դրույքաչափով	**(333,757)**	**(257,102)**
	(17,408)	(11,472)
Չնվազեցվող ծախսեր	(2,338)	(144)
Զուտ վնաս արտարժույթով գործառնություններից	**(353,503)**	**(268,718)**

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց շարժը համապատասխան տարիների համար ներկայացված է ստորև.

Հիմնական միջոցներ	***2021թ.***	***Ֆինանսական արդյունքների մասին հաշվետ-վությունում ճանաչված***	***2022թ.***
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,382	(18,334)	(16,952)
Այլ ակտիվներ	48	(44)	4
Այլ պարտավորություններ	39	(2,271)	(2,232)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,713	22,024	26,737
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	860	669	1,529
Հիմնական միջոցներ	**7,042**	**2,044**	**9,086**

Հիմնական միջոցներ	***2020թ.***	***Ֆինանսական արդյունքների մասին հաշվետ-վությունում ճանաչված***	***2021թ.***
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(3,566)	4,948	1,382
Այլ ակտիվներ	14	34	48
Այլ պարտավորություններ	31	8	39
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	8,941	(4,228)	4,713
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	555	305	860
Հիմնական միջոցներ	**5,975**	**1,067**	**7,042**

12. Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	***2022թ.***	***2021թ.***
Ֆոնդերի կառավարման գծով ստացվելիք գումարներ	266,815	226,374
Այլ դեբիտորական պարտքեր	20,246	13,023
Հանած՝ այլ ֆինանսական ակտիվերի արժեզրկման գծով պահուստ	(253)	(215)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**286,808**	**239,182**
Կանխավճարներ	12,817	3,856
Այլ ոչ ֆինանսական ակտիվներ	1,783	2,723
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	**14,600**	**6,579**
Ընդամենը այլ ակտիվներ	**301,408**	**245,761**

Բոլոր այլ ակտիվների բաշխված են Փուլ 1-ում: ԱՎԿ պահուստի փոփոխությունների վերլուծությունը 2022 և 2021 թվականների համար ներկայացված է ստորև.

	Հազար ՀՀ դրամ
ԱՎԿ պահուստը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**215**
ԱՎԿ փոփոխություն	38
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**253**
ԱՎԿ պահուստը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**169**
ԱՎԿ փոփոխություն	46
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**215**

13. Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	***2022թ.***	***2021թ.***
Կրեդիտորական պարտքեր	190,602	130,704
Վարձակալության գծով պարտավորություն	117,236	7,959
Աշխատակիցների գծով պարտք	29,757	20,197
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**337,595**	**158,860**
Աշխատակիցների գծով պարտք և այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	2,562	3,148
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**2,562**	**3,148**
	340,157	**162,008**

Աշխատակիցների գծով պարտքի և այլ ոչ ֆինանսական պարտավորությունների մեջ ներառված պահուստների գծով շարժը հետևյալն է.

	Չօգտագործված արձակուրդ *Հազար ՀՀ դրամ*	***Հաշվեգրված բոնուսներ*** *Հազար ՀՀ դրամ*	***Ընդամենը*** *Հազար ՀՀ դրամ*
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**3,600**	**8,875**	**12,475**
Տարվա ընթացքում հաշվեգրված	10,848	12,825	**23,673**
Մարված	(10,476)	(6,754)	**(17,230)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,972**	**14,946**	**18,918**
Տարվա ընթացքում հաշվեգրված	14,376	19,820	**34,196**
Մարված	(11,167)	(14,946)	**(26,113)**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,181**	**19,820**	**27,001**

14. Սեփական կապիտալ

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 800,000 հազար ՀՀ դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության՝ բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 2,500 հատ սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 320,000 դրամ անվանական արժեքով:

2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	***Վճարված բաժնետիրական կապիտալ***	***Բաժնեմասը վճարված կապիտալում***
«ԱՄՈՒՆԴԻ-ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» բաժնետիրական ընկերություն (Ֆրանսիա)	408,000	51%
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (Հայաստան)	392,000	49%
	800,000	**100%**

2022թ.-ի ապրիլին Բաժնետերերի ժողովում Ընկերությունը 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա գործունեության արդյունքների հիման վրա հայտարարել է ընդամենը 1,101,644 հազար ՀՀ դրամ շահաբաժիններ (մեկ բաժնետոմսի դիմաց 440.7 հազար ՀՀ դրամ): 2021 թվականի ապրիլին հայտարարած շահաբաժինները կազմել են 718,426 հազար ՀՀ դրամ 2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա արդյունքների հիման վրա (մեկ բաժնետոմսի դիմաց 287.3 հազար ՀՀ դրամ):

15. Միջնորդավճարների գծով եկամուտ

Հազար ՀՀ դրամ	***2022թ.***	***2021թ.***
Ֆոնդերի կառավարման վճարներ	2,906,850	2,378,922
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	**2,906,850**	**2,378,922**

16. Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	***2022թ.***	***2021թ.***
Աշխատակիցների հատուցումներ	152,342	104,969
Անձնակազմի գծով այլ ծախսեր	35,451	21,150
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**187,793**	**126,119**

17. Վարչական և այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	***2022թ.***	***2021թ.***
Պահառության վճար	266,851	241,985
Ներդրումների կառավարման պատվիրակման գծով վճարներ	232,320	188,050
Ֆոնդերի կառավարչական և հաշվառման ծախսեր	88,848	77,701
Տեխնիկական ծրագրերի օգտագործման ծախսեր	80,359	67,744
Աշխատանքի կառավարման մասնագիտական ծառայություններ	66,196	90,190
Բարեգործական ծախսեր	65,585	58,445
Ներկայացուցչական և գովազդի ծախսեր	43,376	58,416
Մաշվածության գծով ծախսեր	35,544	34,934
Մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր	16,080	22,721
Գործուղման ծախսեր	11,268	–
Հիմնական միջոցների վերանորոգման ծախսեր	6,502	5,141
Հարկեր, բացառությամբ շահութահարկի, և տուրքեր	5,469	11,737
Ապահովագրության գծով ծախսեր	4,024	5,025
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	3,810	15,526
Վարկային կորուստների գծով ծախս (Ծան. 7, 8, 12)	3,512	1,922
Վարձակալություն ծախսեր	2,241	–
Մշակութային ծախսեր	1,574	–
Այլ ծախսեր	16,851	12,167
Ընդամենը այլ ծախսեր	**950,410**	**891,704**

18. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

Իրավական և հարկային միջավայր

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել էական տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են էական հարկային ռիսկ առաջացնել՝ ի համեմատ այլ երկրների: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները: 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության նկատմամբ չի եղել որևէ դատական հայց: Հետևաբար, Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

19. Գործարքներ կապակցված կողմերի հետ

ՀՀՄՍ 24 *«Կապակցված կողմերի բացահայտումներ»* ստանդարտի համաձայն կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկը հնարավորություն ունի վերահսկել կամ նշանակալի ձևով ազդել մյուս կողմի գործառնական և ֆինանսական որոշումների վրա: Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերության մայր Ընկերությունը «ԱՄՈՒՆԴԻ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» բաժնետիրական ընկերությունն է (Ֆրանսիա): Ընկերության վերջնական վերահսկող է հանդիսանում SAS RUE LA BOETIE -ն:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում:

19. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

Կապակցված կողմերի հետ գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտը և ծախսը հետևյալն են.

	2022թ.		2021թ.	
Հազար ՀՀ դրամ	***Մայր կազմակեր-պություն***	***Այլ կապակցված կողմեր***	***Մայր կազմակեր-պություն***	***Այլ կապակցված կողմեր***
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Հունվարի 1-ի դրությամբ	**–**	**282,054**	**–**	**76,471**
Տարվա ընթացքում ստացված	–	4,694,491	–	3,294,563
Տարվա ընթացքում վճարված	–	(4,951,896)	–	(3,088,980)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**–**	**24,649**	**–**	**282,054**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	**–**	**872,939**	**–**	**605,281**
Տարվա ընթացքում ներդրված	–	1,592,937	–	796,158
Տարվա ընթացքում մարված	–	(841,460)	–	(528,500)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**–**	**1,624,416**	**–**	**872,939**
Այլ ակտիվներ				
Հունվարի 1-ի դրությամբ	**–**	**13,023**	**–**	**7,693**
Տարվա ընթացքում աճ	2,465	17,895	–	13,283
Տարվա ընթացքում նվազում	(15)	(13,122)	–	(7,953)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,450**	**17,796**	**–**	**13,023**
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	–	92,664	–	56,040
Արժեզրկման պահուստ	–	(3,474)	–	(1,876)
Ֆինանսական խորհրդատվությունից եկամուտ	–	20,246	–	13,023
Զուտ (վնաս)/օգուտ արտարժույթով գործառնություններից	5,065	(18,254)	5,494	(7,912)
Աշխատանքի կառավարման մասնագիտական ծառայություններ	(66,196)	–	(90,190)	–
Վարչական և այլ ծախսեր	(294,836)	(108,432)	(260,241)	(28,728)

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ներդրված ժամկետային ավանդների տոկոսադրույքը կազմել է 8-10% ՀՀ դրամով, 3% ԱՄՆ դոլարով և 1-1,6% Եվրոյով ներդրված ժամկետային ավանդների համար (2021: 8-9% ՀՀ դրամով ներդրված ժամկետային ավանդների համար):

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	***2022թ.***	***2021թ.***
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	80,533	52,064
Այլ հատուցումներ	6,020	6,392
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով փոխհատուցումներ	**86,553**	**58,456**

20. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում իրական արժեքով չափվող ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են ստորև: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

- Մակարդակ 1 – նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):
- Մակարդակ 2 – Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- Մակարդակ 3 – ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրական արժեքով, և վերլուծում է դրանք՝ ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, որում իրական արժեքի չափումը դասակարգված է.

Հազար ՀՀ դրամ	*Մակարդակ 2*	*Ընդամենը իրական արժեք*	*Ընդամենը հաշվեկշռային արժեք*
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24,649	**24,649**	**24,649**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,588,971	**1,588,971**	**1,624,416**
Այլ ֆինանսական ակտիվներ	286,808	**286,808**	**286,808**
Ֆինանսական պարտավորություններ	337,595	**337,595**	**337,595**

Հազար ՀՀ դրամ	*Մակարդակ 2*	*Ընդամենը իրական արժեք*	*Ընդամենը հաշվեկշռային արժեք*
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	282,054	**282,054**	**282,054**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	846,415	**846,415**	**872,939**
Այլ ֆինանսական ակտիվներ	239,182	**239,182**	**239,182**
Ֆինանսական պարտավորություններ	158,860	**158,860**	**158,860**

Մինչև մեկ տարի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է դրանց իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ տարուց ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքների հետ

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	*Մակարդակ 2*	*Ընդամենը*
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
Ֆինանսական ակտիվներ		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ	1,321,606	**1,321,606**

20. Ֆինանսական գործիքների իրական արժեք (շարունակություն)

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	*Մակարդակ 2*	*Ընդամենը*
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
Ֆինանսական ակտիվներ		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ	1,430,007	**1,430,007**

Քանի որ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումները չեն գնանշվում ակտիվ շուկաներում, իրական արժեքը որոշվում է՝ ելնելով կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքից:

21. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ակտիվները և պարտավորությունները՝ իրենց սպասվելիք մարման ժամկետների կտրվածքով:

Հազար ՀՀ դրամ	*Մինչև 1 տարի*	*1 տարուց ավելի*	*Ընդամենը*
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24,649	–	**24,649**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,624,416	–	**1,624,416**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ	–	1,321,606	**1,321,606**
Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	–	135,141	**135,141**
Հետաձգված հարկային ակտիվ	–	9,086	**9,086**
Այլ ակտիվներ	301,408	–	**301,408**
Ընդամենը ակտիվներ	**1,950,473**	**1,465,833**	**3,416,306**
Պարտավորություններ			
Ընթացիկ հարկային պարտավորություն	296,100	–	**296,100**
Այլ պարտավորություններ	250,656	89,501	**340,157**
Ընդամենը պարտավորություններ	**546,756**	**89,501**	**636,257**
Զուտ դիրք	**1,403,717**	**1,376,332**	**2,780,049**

Հազար ՀՀ դրամ	*Մինչև 1 տարի*	*1 տարուց ավելի*	*Ընդամենը*
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	282,054	–	**282,054**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	872,939	–	**872,939**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ	–	1,430,007	**1,430,007**
Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	–	35,506	**35,506**
Հետաձգված հարկային ակտիվ	–	7,042	**7,042**
Այլ ակտիվներ	245,761	–	**245,761**
Ընդամենը ակտիվներ	**1,400,754**	**1,472,555**	**2,873,309**
Պարտավորություններ	221,910	–	**221,910**
Ընթացիկ հարկային պարտավորություն	162,008	–	**162,008**
Այլ պարտավորություններ	**383,918**	**–**	**383,918**
Ընդամենը պարտավորություններ	**1,016,836**	**1,472,555**	**2,489,391**

22. Ռիսկերի կառավարում

Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է՝ հայտնաբերել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, և արժանահավատ և նորացված տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը:

Ընկերությունը պարբերաբար վերանայում է ռիսկի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայում, գործիքներում փոփոխություններն արտացոլելու և լավագույն փորձին հետևելու համար:

Կարևորագույն ռիսկերն են վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկը: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքների, տոկոսադրույքների և այլ գնային ռիսկերը:

Վարկային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված պարտապանի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Ընկերությանը կորուստներ կարող է պատճառել:

Ընկերությունը հաշվարկում է ԱՎԿ պահուստ՝ հաշվի առնելով ակտիվի գործողության ընթացքում ակնկալվող վարկային կորուստները:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվեն այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Ընկերությունը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ կամ պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են այն արժույթները, որոնցով 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի էական արժութային դիրքեր՝ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև սպասվող դրամական հոսքերի գծով: Կատարված վերլուծությունը արտահայտում է ՀՀ դրամի նկատմամբ՝ արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա: Բացասական գումարները արտացոլում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազումը, դրական գումարները՝ պոտենցիալ զուտ աճը:

Հազար ՀՀ դրամ	***Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2022թ.***	***Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2022թ.***	***Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2021թ.***	***Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2021թ.***
Արժույթ				
	21.3%	(56,783)	8.5%	(2,155)
Եվրո	-21.3%	56,783	-8.5%	2,155
Դոլար	12.6%	40,881	5%	3
	-12.6%	(40,881)	-5%	(3)

22. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Շուկայական ռիսկ (շարունակություն)

Ստորև ներկայացված է Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների.

Հազար ՀՀ դրամ	*ՀՀ դրամ*	*Եվրո*	*Դոլար*	*Ընդամենը*
Ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	20,972	3,603	74	**24,649**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,049,716	250,769	323,931	**1,624,416**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ	1,321,606	–	–	**1,321,606**
Այլ ֆինանսական ակտիվներ	266,562	20,246	–	**286,808**
Ընդամենը	**2,658,856**	**274,618**	**324,005**	**3,257,479**
Ֆինանսական պարտավորություններ				
Այլ ֆինանսական պարտավորություններ	329,490	8,105	–	**337,595**
Ընդամենը	**329,490**	**8,105**	**–**	**337,595**
Զուտ դիրք 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,329,366**	**266,513**	**324,005**	**2,919,884**
Զուտ դիրք 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,690,617**	**(25,357)**	**62**	**2,665,322**

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամանակ:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար վերջիններիս մարման ժամանակ, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը: Ընկերությունը պահում է բարձր իրացվելի ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում:

Ֆինանսական պարտավորությունների վերլուծություն՝ ըստ պայմանագրով նախատեսված մնացորդային մարման ժամկետների

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության վարձակալության գծով պարտավորությունների մարման ժամկետներն ըստ պայմանագրային չզեղչված պարտավորությունների:

Հազար ՀՀ դրամ	*Ցպահանջ և մինչև 1 ամիս*	*1-ից 3 ամիս*	*4-ից 12 ամիս*	*1 տարուց ավել*	*Ընդամենը*
2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Վարձակալության գծով պարտավորություններ	2,704	5,408	29,891	149,442	**187,445**
Ընդամենը չզեղչված ֆինանասական պարտավորություններ	**2,704**	**5,408**	**29,891**	**149,442**	**187,445**

Հազար ՀՀ դրամ	*Ցպահանջ և մինչև 1 ամիս*	*1-ից 3 ամիս*	*4-ից 12 ամիս*	*1 տարուց ավել*	*Ընդամենը*
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Վարձակալության գծով պարտավորություններ	2,561	4,077	2,038	–	**8,676**
Ընդամենը չզեղչված ֆինանասական պարտավորություններ	**2,561**	**4,077**	**2,038**	**–**	**8,676**

22. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը համակարգի խափանման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Ընկերությունը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան ռեակցիայի միջոցով Ընկերությունը կարող է կառավարել նման ռիսկերը: Ներքին վերահսկողության համակարգը նախատեսում է պարտավորությունների արդյունավետ բաժանման, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգեր, աշխատակազմի ուսուցում և գնահատում՝ այդ թվում ներքին աուդիտը:

23. Կապիտալի համարժեքություն

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է սահմանած պահանջներին, և որ Ընկերությունը ապահովում է ամուր վարկային վարկանիշ և ուժեղ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Կապիտալը բաղկացած է կանոնադրական կապիտալից, վաճառքի համար մատչելի ներդրումների վերագնահատման պահուստից, չբաշխված վնասից և պահուստային կապիտալից:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանվում է 500,000 հազար ՀՀ դրամ: 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կապիտալի չափը համապատասխանում է օրենսդրությամբ սահմանված պահանջներին

24. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն

Հազար ՀՀ դրամ	*Ընդամենը ֆինանսական գործունեությունից պարտավորությունները 2022թ.*	*Ընդամենը ֆինանսական գործունեությունից պարտավորությունները 2021թ.*
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**7,959**	**32,175**
Վարձակալության գծով պարտավորության ճանաչում	131,213	2,572
Տոկոսի ավելացում	16,068	2,533
Վարձակալության գծով պարտավորության հիմնական մասի մարում	(21,936)	(26,788)
Վարձակալության գծով պարտավորության տոկոսի վճարում	(16,068)	(2,533)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**117,236**	**7,959**